



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Մ Ա Ն

29 սեպտեմբերի 2022 թվականի N 1495-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 1481-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ Մ Ա Ն** է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի «Մաքսային մարմնի կողմից ներմուծման մաքսատուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշման ընդունման և չեղյալ ճանաչման կարգը սահմանելու մասին» N 1481-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման և որոշման հավելվածի վերնագրերը, որոշման 1-ին կետը, որոշման հավելվածի N 1, NN 3-5 ձևերի վերնագրերը և ձևերը «ներմուծման մաքսատուրքի» բառերից հետո լրացնել «, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և բնապահպանական հարկի» բառերով.

2) որոշման նախաբանը «5-րդ կետը» բառերից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 78-րդ հոդվածի 5.1-ին, 99-րդ հոդվածի 2.1-ին մասերը և 181-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը» բառերով.

3) որոշման հավելվածի՝

ա. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Սույն կարգով կարգավորվում են 2017 թվականի ապրիլի 11-ի «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրք) 59-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 78-րդ հոդվածի 5.1-ին, 99-րդ հոդվածի 2.1-ին մասերով և 181-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերում՝ մաքսային մարմնի կողմից ներմուծման մաքսատուրքի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և բնապահպանական հարկի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետ վճարելու մասին որոշման ընդունման և չեղյալ ճանաչման հետ կապված հարաբերությունները:»,

բ. 2-րդ և 2.1-ին կետերը, 7-րդ կետի 4-7-րդ ենթակետերը, 10-12-րդ, 14-18-րդ կետերը «ներմուծման մաքսատուրքի» բառերից հետո լրացնել «, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և բնապահպանական հարկի» բառերով,

գ. 7-րդ կետի 5-րդ ենթակետում «մաքսատուրքի գծով» բառերը փոխարինել «մաքսատուրքի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և բնապահպանական հարկի գծով» բառերով,

դ. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«8. Դիմումին կից ներկայացվում են օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերի առկայությունը հիմնավորող փաստաթղթերը, իսկ ներմուծման մաքսատուրքի մասով՝ նաև օրենսգրքի 58-րդ հոդվածով սահմանված՝ ներմուծման մաքսատուրքի գծով պարտավորության կատարման ապահովումը հաստատող փաստաթղթերը:»,

ե. 12-րդ կետի 4-րդ ենթակետը «մաքսային» բառից հետո լրացնել «և հարկային» բառերով,

զ. 18-րդ կետը «մաքսատուրք» բառից հետո լրացնել «և հարկեր» բառերով,
է. N 2 ձևը շարադրել նոր խմբագրությանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան